

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Հ.Վ. ՊԻՎԱԶՅԱՆ

ԴՐԱՍԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

«ԴՐԱՍԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐԿԵՐ, ԲԱՆԿԵՐ»
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵԶՍԵՐ

ԵՐԵՎԱՆ
ՀՊԱՀ
2010

ՀՏԴ 336 (042)
ԳՄԴ 65. 9 (2) 262
Պ 650

Հաստատված է Հայաստանի պետական ազրարային համալսարանի գիտական խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Բայադյան
Խմբագիր՝ Ս.Ռ. Պետրոսյան
Գրախոսներ՝ տ.գ.դ., պրոֆեսոր Ա. Առաքելյան
տ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Սարինյան

ՊԻՎԱԶՅԱՆ Հ.Վ.

Պ 650

Դրամաշրջանառության կայունացման մեթոդները:
«Դրամաշրջանառություն, վարկեր, բանկեր» առարկայի
դասախոսության տեքստեր. - Եր.: ՀՊԱՀ, 2010 թ. - 56 էջ:

Այստեղ ներկայացված են դրամական համակարգի առանձնահատկությունները, մասնավորապես՝ դրամական համակարգը, դրամական էմիսիան և դրամաշրջանառության կայունացման մեթոդները:

Աշխատանքը նախատեսված է «Ֆինանսների կառավարում», «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտությունների ուսանողների համար:

ՀՏԴ 336 (042)
ԳՄԴ 65. 9 (2) 262

ISBN 978-9939-54-351-2

© Հ.Վ. Պիվազյան, 2010

© Հայաստանի պետական ազրարային համալսարան, 2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.	4
Թեմա 1. Գրամական համակարգ.	6
1.1. Գրամական համակարգի հասկացությունը և բովանդակությունը.	6
1.2. Գրամական համակարգի տարրերը.	13
1.3. Գրամական համակարգերի դասակարգումը.	15
1.4. Հայաստանի Հանրապետության դրամական համակարգը.	19
Թեմա 2. Գրամաշրջանառության կայունացման մեթոդները	23
2.1. Գրամաշրջանառության կառուցվածքը.	23
2.2. Գրամաշրջանառության տնտեսական օրենքը, շրջանառության մեջ դրամի քանակի և շրջանառության արագության որոշումը.	30
2.3. Գրամական ագրեգատները.	38
2.4. Գրամական բարեփոխումները և փողի կայունացման մեթոդները.	43
Գրականություն.	54

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տասնամյակում աշխարհի զարգացած երկրների կենտրոնական բանկերը, գների կայունությունից բացի, որպես առաջնային խնդիր, ամրագրել են նաև երկրի ֆինանսական կայունությունը: ՀՀ Կենտրոնական բանկը նույնպես ստանձնել է տնտեսության ֆինանսական կայունության խոցելիության գնահատման պարբերական մոնիտորինգ և 2008 թվականից սկսած պարտավորվել է հետևողականորեն ուշադրություն դարձնել դրամաշրջանառության կարգավորման և դրա կայունացման մեթոդներին՝ մշակելով դրամավարկային քաղաքականության նոր ծրագրեր: Այն իր առջև նպատակ է դրել յուրաքանչյուր տարի ֆինանսական շուկայի մասնակիցներին և լայն հասարակությանը տեղեկացնել ՀՀ ֆինանսական կայունությունը խթանող ռիսկերի և դրանց զարգացման հավանական ուղղությունների մասին: ՀՀ ֆինանսական համակարգի ճկունությունն ու կայունությունը չեզոքացնելու, ֆինանսական կայունությունը վտանգող առկա և պոտենցիալ ռիսկերը չխաթարելու համար կարեվորվում է ֆինանսական շուկաների ու հաստատությունների արդյունավետ գործունեությունը:

Դրամաշրջանառության կայունացման կարևոր նախապայմաններն են համաշխարհային տնտեսության կայուն զարգացումը և միջազգային ֆինանսական շուկաներում անցանկալի ցնցումների բացակայությունը: Համաշխարհային տնտեսության կայուն զարգացումը բարենպաստ նախադրյալ է ստեղծում Հայաստանի արտաքին առևտրի բնականոն զարգացման, ներմուծվող ապրանքների գների կայունության, արտահանվող ապրանքների նկատմամբ պահան-

ջարկի աճի, Հայաստանում արտաքին մասնավոր ներդրումների, մասնավոր տրանսֆերտների ու այլ եկամուտների կայուն ներհոսքի համար: Այդ գործընթացները կնպաստեն ՀՀ-ում տնտեսավարող սուբյեկտների անընդհատ արտադրությանն ու վերարտադրությանը, կայուն եկամուտների ու հետագա զարգացմանը՝ դրանով իսկ ազդելով դրամաշրջանառության կայունացման վրա թե՛ կանխիկ, թե՛ անկանխիկ ձևերում, իսկ դրամի զանգվածը և դրամական բազան կլինեն ապահովված թե՛ ապրանքների առաջարկով, թե՛ դրամի պահանջարկով:

ԹԵՍԱ 1. ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1.1. ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՎԱՆ-ԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հասարակական կյանքի կազմակերպման կարևորագույն լծակներից մեկը տնտեսական կյանքը ձևավորող *դրամական համակարգն է*, որը հայտնի է մարդկությանը վաղ անցյալից և ծագել է որպես արտադրողական ուժերի և ապրանքային արտադրության արդյունք: Դրամական համակարգը որոշակի տարրերի կառուցվածքային ընդհանրությունն է, որոնք սերտորեն փոխկապակցված են և ապահովում են դրա ամբողջականությունը: Այն իրականացվում է մի երկրում կամ միասնական տնտեսական տարածության մեջ դրամական հարաբերությունների կազմակերպման միջոցով: Դրամական համակարգը ձևավորվում է պատմականորեն և ամրապնդվում համապատասխան օրենսդրությամբ: Դրամական հարաբերությունների համակարգային կազմակերպման համար անհրաժեշտ են որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալներ: Օբյեկտիվ նախադրյալ է ապրանքադրամային հարաբերությունների զարգացման բավականին բարձր մակարդակի հասնելը: Օրինակ՝ ապրանքադրամային հարաբերությունների պայմաններում, որոնք հիմնված են փոխանակման պատահական ձևերի վրա, ապրանքադրամային հարաբերությունները չեն կրում կայուն կապերի բնույթ, կամ դրամական հարաբերությունները կազմակերպված չեն համակարգի տեսքով: Հետևաբար՝ կայուն ապրանքադրամային հարաբերությունների զարգացումը նաև առաջացնում է պետության կողմից դրանց կարգավորման անհրաժեշտություն:

Սուբյեկտիվ նախադրյալ է օրինական վճարման միջոցների՝ օրենսդրական ճանապարհով որոշման անհրաժեշտությունը, շրջանառության մեջ դրանց հրապարակումը (ռեգլամենտացիա): Այդ է պատճառը, որ դրամական համակարգերը ձևավորվել են ոչ միանգամից, այլ ապրանքափոխանակման արդյունքում, երբ առաջացան կայուն շուկաներ և տեղի ունեցավ պետական իշխանության ամրապնդում (16-17-րդ դարեր):

Դրամական համակարգերը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից՝ *ֆունկցիոնալ* և *ինստիտուցիոնալ*:

Ֆունկցիոնալ տեսանկյունից դրամական համակարգը մի երկրում կամ միասնական տնտեսական հարաբերություններում դրամաշրջանառության կազմակերպումն է՝ դրամական հարաբերությունների, ձևերի, մեթոդների և սկզբունքների կանոնակարգված ամբողջությունը:

Ինստիտուցիոնալ տեսանկյունից դրամական համակարգն այն հաստատությունների ամբողջությունն է, որոնք ստեղծում և կարգավորում են փողի (դրամ) էմիսիայի (դրամի բաց թողնում շրջանառություն) տնտեսական և իրավական հիմքերը, դրանց շրջանառության, բաշխման և վերաբաշխման միջոցները:

Դրամական համակարգի ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ փորձի հիման վրա ձևավորվում է համակարգերի միասնությունը մի երկրում կամ միասնական տնտեսական տարածության մեջ: Դրամական հարաբերությունները, դրանց ձևերը, մեթոդները և հիմնական սկզբունքները չեն կարող առաջանալ կամ զարգանալ առանց ժամանակակից տնտեսության գոյության կամ առանց դրանք կազմակեր-

պող հաստատությունների, ինչպիսիք են բանկերը և վարկային հաստատությունները: Միևնույն ժամանակ դրամավարկային հաստատությունները հայտնվում են հենց այն ժամանակ, երբ դրամական հարաբերությունները ստանում են բավականաչափ զարգացած ձևեր և դրամական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտություն է առաջանում: Դրամական համակարգն իրականացվում է երկու՝ ա) *մետաղական*, բ) *թղթադրամական* համակարգերի տեսքով:

Ըստ այդմ ձևավորվել են ժամանակաշրջանները, որոնք տարբերվում են ըստ ձևի, որակի և կշռի: Դրանք ստացել էին իրենց անվանումները՝ 1) *միամետաղյա ժամանակաշրջան*, որը վաղ անցյալում կոչվել է *մոնոմետալիզմ*, այսինքն՝ ապրանքների փոխանակության ժամանակ ապրանքների արժեքը չափվում էր միայն մեկ մետաղով: Դա կարող էր լինել ցանկացած մետաղ, սակայն հիմնականում ընտրվում էր այն մետաղը, որի վրա կատարվող ծախսերը ամենաբարձրն էին, ինչպես օրինակ՝ արծաթը, ոսկին և այլ մետաղներ: Հետևաբար՝ ընտրված մետաղը, լինելով ապրանք, կատարում էր համընդհանուր համարժեքի դեր: Օրինակ՝ արծաթի մոնոմետալիզմին Ռուսաստանն անցել էր 1843-1853 թվականներին, Հնդկաստանը՝ 1852-1893 թվականներին, Նիդեռլանդները՝ 1847-1875 թվականներին և այլն: Բոլոր երկրներում արծաթի մոնոմետալիզմից անցումը ոսկուն տեղի ունեցավ ոչ միանգամից, այլ նախ ձևավորվեց երկրորդ ժամանակաշրջանը, որը կոչվեց *երկմետաղյա ժամանակաշրջան* կամ, ինչպես այդ ժամանակ ասում էին, բիմետալիզմը, որի հիմքում ընկած էր երկու մետաղների շրջանառումը որպես փողային ապ-

րանք: Որպես համընդհանուր համարժեք՝ ապրանքների վրա կատարված ծախսերը չափելու կամ որպես արժեչափի միջոց ճանաչվել և օգտագործվում էր միաժամանակ և՛ ոսկին, և՛ արծաթը:

Միևնույն ապրանքը շուկայում փոխանակվում էր և՛ ոսկով, և՛ արծաթով, իսկ ապրանքների վրա դրվում էր երկու գին: Այդ տեսանկյունից մետաղական դրամական համակարգը կատարում էր երկու ֆունկցիա՝ 1) զուգահեռ և 2) երկակի: Ջուգահեռի ժամանակ երկու մետաղներն էլ հավասար իրավունքով կատարում էին փողի բոլոր ֆունկցիաները և ապրանքների գները սահմանվում էին միաժամանակ երկու մետաղով: Երկակիի ժամանակ պետությունն ինքն էր սահմանում յուրաքանչյուր մետաղի արժեքային և կշռային հարաբերակցությունը: Այսպես՝ պետությունը սահմանում էր՝ 1 կգ ոսկին հավասար է 15 կգ արծաթի, դա նշանակում է, որ նույն ապրանքը կարելի է գնել և՛ 1 կգ ոսկով, և՛ 15 կգ արծաթով:

Երկմետաղյա դրամական համակարգն այդ ժամանակ թեև հակասում էր արժեքի օրենքի գործունեությանը, այնուամենայնիվ երկու մետաղները համարժեքությամբ չէին ներկայացնում միասնական ապրանքի չափիչի դերը: Այդ համակարգը չէր ապահովում ճիշտ և կայուն դրամաշրջանառություն, քանի որ մի մետաղի արժեքի փոփոխության հետևանքով տեղի են ունենում ապրանքների գների տատանումներ՝ աճ կամ նվազում: Այդ պատճառով երկմետաղյա դրամական համակարգը չարդարացրեց դրամական համակարգի պահանջները, ինչի արդյունքում վերադարձան միամետաղյա դրամական համակարգին: Մինչև 19-րդ դարի սկիզբը մոնոմետալիզմի անցավ նախ Անգլիան, հետո Գերմանիան, ապա մյուս երկրները:

Դ-ա բացատրվում է նրանով, որ Անգլիայում ոսկու պաշտոնական արժեքն ավելի բարձր էր գնահատված, այդ պատճառով մեծ քանակությամբ ոսկու պաշարներ հոսեցին դեպի Անգլիա: Անգլիան էր, որ առաջինը սահմանափակեց արծաթի դրամահատումը և ընդունեց ոսկու դրամահատման ազատ անվճար կարգ: Ավելի ուշ ոսկու դրամական համակարգին անցան Ֆրանսիան, Շվեյցարիան, Բելգիան, Իտալիան, իսկ ավելի ուշ՝ Հունաստանը և Ռումինիան: 1865 թ. ստեղծվեց լատինական երկրների դրամական համակարգի քառյակ միություն: Այս միության մեջ մտնող պետությունները սահմանել էին միևնույն դրամական միավորը և սահմանել մետաղների հետևյալ հարաբերությունը՝ 4,5 գրամ արծաթ և 0,29 գրամ ոսկի: Այդ օրենքի համաձայն մի երկրի փողը ազատ շրջանառվում էր միության անդամ երկրներում: Այս կարգը պահպանվեց 1865-1878 թթ., քանի որ բոլոր երկրներն աստիճանաբար անցան միայն ոսկյա փողերի շրջանառման կարգին, և միայն 1900 թ. ընդունվեց *ոսկե դրամի ստանդարտ դասական* ձևը: Ոսկե ստանդարտ դրամը բոլորի կողմից ընդունվել է որպես *վալյուտա*, այսինքն՝ փոխանակային բարձր արժեք ունեցող ապրանք: Ոսկե դրամները շրջանառություն էին բաց թողնվում ազատ դրամահատման կարգով, բայց դրա հետ մեկտեղ շրջանառություն մտան նաև այլ մետաղներից դրամներ, որոնց համար սահմանվում էր փակ կարգ: Այդ կարգը սահմանում էին պետությունները յուրովի, և դրամահատումը սահմանափակ էր ըստ մետաղների խառնուրդի: Դրամներում մետաղների խառնուրդի չափերը բնութագրում էին տվյալ երկրի դրամների դիրքը և դերը դրամական համակարգում: Մետաղների խառնուրդով դրամները կոչվեցին *լիգատուրա*,

իսկ հետագայում դրանք որպես թերարժեք դրամներ մնացին որպես մանրադրամներ և օգտագործվում էին ցածր արժեք ունեցող ապրանքների շրջանառության համար: Այդ կապակցությամբ խիստ վերահսկվում էին ոսկե դրամների արտահանման կամ ներմուծման ծավալները, ինչի հետևանքով կրճատվեց ոսկե դրամների շրջանառությունը, քանի որ տվյալ երկրի ապրանքային արտադրության ծավալներին չէր համապատասխանում ապրանքափոխանակությունը: Բացի դրանից՝ շրջանառությունում ոսկին մաշվում էր, իսկ այդ կորուստները չէին վերականգնվում, ցածր արժեք ունեցող ապրանքների փոխանակության ժամանակ ոսկին չէր կարող ճիշտ կատարել արժեչափի ֆունկցիան: Այս և նման խնդիրները շրջանառությունից դուրս մղեցին ոսկե դրամները, քանի որ առաջանում էին ճգնաժամեր. ապրանքային արտադրանքը չէր շրջանառում կապիտալը, իսկ ոսկե դրամները կորցնում էին իրենց գնողունակությունը: 1929-1933 թթ. ճգնաժամը վերջնականապես շրջանառությունից դուրս մղեց ոսկյա դրամների ստանդարտը կամ ոսկե ձուլակտորը: Այն պահպանվեց միայն որպես իրական փողի միավորում կշռային ստանդարտ չափ և անվանվեց *գների մասշտաբ*: Գների մասշտաբը ոսկու այն քանակն է՝ կշիռը և որակը, որով պետությունը, ելնելով իր ապահովվածությունից, սահմանում է միավոր դրամանիշի արժեքը: Գների մասշտաբը սահմանվում է ոսկով, որովհետև որպես ապրանք՝ ոսկու մեկ միավորի վրա կատարվում են ամենաբարձր ծախսերը, ինչը հնարավորություն է տալիս չափել փոխանակվող ապրանքների վրա կատարված ծախսերը: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր երկիր, պետություն թղթադրամի մեկ միավորի հաշվով սահմանում էր

ոսկե ստանդարտի՝ միմյանցից տարբեր չափեր, հաշվի առնելով իր երկրում առկա ոսկու պաշարները կամ ապրանքային արտադրության ծավալների ապահովվածությունը:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո բոլոր երկրներում հաստատվել է թղթյա-վարկային դրամների շրջանառությունը՝ *բանկնոտները*: Բանկնոտներն իրական փողի (ոսկու) փոխարինողներն էին, որոնք թողարկվում էին պետության կողմից և պետության կողմից էլ ստանում իրենց անվանական արժեքը: Իսկ պետությունն անվանական արժեքը սահմանում էր դրամի միավորում կիրառելով ոսկու կշռային ստանդարտ չափը, որը կոչվում է գների մասշտաբ: Գների մասշտաբով որոշվում է տվյալ երկրի արժույթի (դրամի) *կուրսը*:

Միջազգային դրամական համակարգում ձևավորվել է համաշխարհային արժույթ կամ համաշխարհային փող հասկացությունը: Մետաղային դրամական համակարգում համաշխարհային փողը ոսկին էր, որը դուրս մնաց շրջանառությունից և այն օգտագործվում է միայն որպես չափի միավոր, ինչպես նաև երկրների միջև վերջնահաշվարկների չափման միջոց կամ վճարային հաշվեկշռի չափման միավոր կամ հասարակական հարստության համընդհանուր փոխանակման միջոց կամ համընդհանուր համարժեք:

ՄԱԿ-ի արժույթային-ֆինանսական կոնֆերանսում դրամական համակարգը, որպես համընդհանուր փոխանակման միջոց, ներկայացրել է *թղթադրամը*, որի միավորը չափվում է ոսկու ստանդարտով կամ գների մասշտաբով: Այդ մասին իր ժամանակին ԱՄՆ-ի ակադեմիայի տնտեսագետ Բրետտոն-Վուդսը ներկայացրել է իր տեսակե-

տը համաշխարհային փողի վերաբերյալ. «Դրամական համակարգում, որպես ինքնուրույն, ինքնատիպ միջպետական վճարամիջոց, հանդես է գալիս նախ ԱՄՆ դոլարը, ապա Անգլիական ֆունտ-ստերլինգը», քանի որ այդ երկու երկրների դրամական միավորում ոսկու ստանդարտը սահմանվել է ամենաբարձրը՝ հաշվի է առնելով ոսկու և ապրանքային արտադրանքի ապահովվածության բարձր մակարդակը: Այդ երկրների ոսկու պաշարների կրճատման արդյունքում 1971-1978 թթ. դրամական համակարգում թուլացել էին դոլարի և ֆունտ-ստերլինգի դիրքերը համաշխարհային արենայում և միայն 1978-ից նոր բարեփոխումների արդյունքում դոլարը նորից ամրապնդեց իր՝ համաշխարհային դրամական միավորի դերը միջազգային հաշվարկների և փոխանակային արժեքի գործում:

1.2. ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԲԵՐԸ

Ինչպես նշվեց, դրամական համակարգը հարաբերությունների, հասարակական, տնտեսական կյանքը ձևավորող կարևորագույն լծակ է, որի սահմաններում առանձին տարրեր գտնվում են որոշակի կառուցվածքային միասնության մեջ: Նախկին մասնատվածության ժամանակաշրջանում, երբ կայուն դրամաշրջանառություն չի եղել, ապա առաջին փորձերը կատարել են դրամափոխները. նրանք դրամաշրջանառությունը կարգավորելու համար մի երկրի փողը փոխանակել են այլ երկրի փողով՝ օգտագործելով իրական փողը՝ ոսկին, և սահմանելով ոսկու ձուլակտորի կշիռն ու հարգը (պրոբա): Հետագայում, կապված շուկայի զարգացման և ֆինանսական դրության կարգավորման հետ, ստեղծել են ազգային շուկաներ, ինչն անհրաժեշ-

տությոն է առաջացրել ունենալ միասնական փող: Փողի միասնականության գաղափարն առաջացել է այն ժամանակ, երբ երկրները ոսկե փողերից անցան թղթա-վարկային փողերի օգտագործմանը: Թղթադրամների անցած դրամական համակարգերում սահմանվեցին մի շարք *տարրեր*, որոնց համաձայն տարբեր երկրներում թղթադրամները՝ ա) ստացան *անվանում*, բ) սահմանվեցին տարբեր *գների մասշտաբներ*, գ) վալյուտային մետաղի (ոսկի) ստանդարտը, դ) տվյալ երկրի դրամահատման կարգը, ե) թղթադրամանիշերի տեսակները, զ) դրամական էմիսիան (դրանք շրջանառություն բաց թողնելու և շրջանառությունից դուրս բերելու կարգը) և այլն:

Դրամական համակարգը բնութագրող տարրերն արտահայտում են տվյալ երկրի դրամի կայունությունը, ինչպես նաև տվյալ պետության ֆինանսական դրությունը:

Ըստ թվարկված տարրերի՝ դրամական միավորի անվանումը սահմանում է տվյալ պետությունը՝ ինքնուրույն, որի հետ միասին որոշվում է գների մասշտաբը, որը թանկարժեք մետաղի կշիռն է դրամական մեկ միավորում, և որով բնութագրվում է պետական դրամի ապահովվածությունը ոսկով կամ ապրանքներով: Արտարժութային մետաղի ստանդարտը թանկարժեք մետաղն է, որով գնահատվում է դրամական միավորը. այն կատարում է արժեչափի ֆունկցիա, որով չափում են բոլոր ապրանքների գները կամ կատարում է ընդհանրական համարժեքի դերը: Հաջորդ տարրը բնութագրում է դրամահատման կարգը, որը մետաղային դրամաշրջանառության ժամանակ ոսկուց հատված դրամների համար սահմանում էր ազատ կարգ (այսինքն՝ ով ոսկի ուներ, կարող էր դրամ հատել), իսկ թղթադրամային

համակարգի ժամանակ դրամահատումը կատարվում է կառավարության որոշմամբ՝ սահմանափակ կարգով: Ոսկեդրամները, որպես քանկարժեք փող, հանդիսանում են վալյուտա (այսինքն՝ բոլոր երկրների համար ընդունելի, գնողունակ, ճանաչված որպես արժեչափ): Ընդհանրապես՝ վալյուտայից պատրաստված փողերը կոչվել են լիարժեք փողեր, իսկ դրանց հետ շրջանառություն մտած լիգատուրաները (տարբեր մետաղների խառնուրդից փողեր՝ մանրադրամներ) կոչվել են թերարժեք փողեր: Դրամահատման կարգը հաճախակի փոփոխվում է. փոխում են թղթադրամների տեսականին, գույները, դրանց վրա պատկերված տվյալ երկրի նշանավոր մարդկանց պատկերները, պաշտպանիչ նշանները՝ կեղծիքներից խուսափելու նպատակով: Այդ պատճառով տվյալ երկրի դրամները դրամահատվում են այլ երկրում՝ խիստ գաղտնիության սկզբունքով:

1.3. ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԴԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

Դրամական համակարգերը դասակարգում են ըստ ժամանակաշրջանների՝ հիմք ընդունելով շրջանառության մեջ մտած փողի տեսակը, քանակը, անվանական և իրական արժեքների տարբերությունից առաջացած էմիսիոն եկամուտը և, վերջապես, տվյալ ժամանակաշրջանում տվյալ երկրի դրամական միավորի ապահովվածությունը: Դրամական համակարգի տեսակը կախված է այն բանից, թե ինչ ձևով է գործում փողը՝ նախ որպես ապրանք, ապա՝ որպես արժեքի չափի միավոր: Ըստ այդմ՝ դրամական համակարգերը լինում են՝

- 1) *մետաղական դրամական համակարգեր*, որոնց դեպքում դրամական միջոցը (ապրանք) իրականացնում է փողի բոլոր ֆունկցի-

ցիաները, իսկ վարկային փողը փոխարինում է փողին՝ կատարելով երկու ֆունկցիա՝ ա) շրջանառության, բ) վճարամիջոցի,

2) *ոչ մետաղական համակարգեր*, որոնք հիմնված են և՛ վարկային, և՛ թղթադրամային դրամաշրջանառության վրա:

Ընդհանրապես՝ մի դրամական համակարգից մյուսին անցումը կախված է այն բանից, թե ապրանքադրամային հարաբերությունների զարգացման որ փուլում է կատարվում անցումը փողի մի տեսակից մյուսին, օրինակ՝ մետաղական համակարգից անցումը թղթադրամային և վարկադրամական տեսակների համակարգերին: Վարկային փողի շրջանառության վրա հիմնված ժամանակակից դրամական համակարգերի բնութագրական գծերն են՝

- ոսկու նշանակության, բանկնոտների ոսկով փոխանակության, դրանց ապահովվածության վերացման և անցումը դեպի ոսկով չփոխանակվող վարկային փողերին,
- ոչ կանխիկ դրամաշրջանառության ընդլայնումը և կանխիկ դրամաշրջանառության կրճատումը,
- դրամաշրջանառության պետական կարգավորման ուժեղացումը,
- Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության զարգացումը:

Դրամական համակարգերը դասակարգվում են նաև ըստ տրևտեսական, սոցիալական և քաղաքական համակարգերի՝ ա) *խմբային վարչահրամայական տնտեսության դրամական համակարգ*, բ) *շուկայական տնտեսության դրամական համակարգ*:

Խնդրային վարչահրամայական տնտեսության դրամական համակարգը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով.

- կանխիկ և ոչ կանխիկ դրամաշրջանառության կենտրոնացում մի միասնական պետական բանկում,
- դրամաշրջանառության օրենսդրական սահմանափակում կանխիկ դրամով, որը սպասարկում է սպառման առարկաների ու ծառայությունների բաշխումը, և ոչ կանխիկ դրամով, որը սպասարկում է արտադրության միջոցների բաշխումը,
- ձեռնարկությունների միջոցների պարտադիր պահում պետական բանկի հաշիվներում, ընդ որում՝ բանկի հաճախորդներն իրենց հաշվից ցանկացած պահի, առաջին պահանջով, իրենց հարմար ձևով և անհրաժեշտ չափով չեն կարող դուրս գրել դրամական միջոցներ,
- հաճախորդները չեն կարող ցանկացած տարածաշրջանում ինքնուրույն ընտրել իրենց հարմար բանկեր կամ բանկային հաշիվներից կանխիկ դրամի ձև,
- դրամաշրջանառության ուղղակի վարչահրամայական կառավարում,
- պետության կողմից ձեռնարկությունների ծախսերի կանխիկ գումարի տեսքով նորմատիվների հաստատում,
- փողը շրջանառություն է բաց թողնվում ըստ տնտեսության զարգացման և պետական պլանի կատարման,
- միավոր դրամանիշում գների մասշտաբի և ազգային արժույթի կուրսի օրենքով հաստատում,

- պետական բանկի կողմից բնակչության խնայողությունների ներդրումների կառավարում և այլն:

Շուկայական տնտեսության դրամական համակարգը ներկայումս ունի հետևյալ բնութագրական առանձնահատկությունները.

- դրամաշրջանառության ապակենտրոնացում տարբեր տեսակի բանկերի միջև,
- կանխիկ և ոչ կանխիկ դրամի էմիսիայի բաժանում բանկային համակարգի տարբեր օղակների միջև, ինչպես օրինակ՝ կանխիկ դրամի էմիսիան՝ որպես Կենտրոնական բանկի հիմնական ֆունկցիա, իսկ անկանխիկ դրամի էմիսիան՝ որպես առևտրային բանկերի գործառնություն ԿԲ-ի կարգավորման համաձայն,
- կանխիկ և անկանխիկ դրամաշրջանառության սահմանափակության վերացում,
- պետական դրամավարկային քաղաքականության կարգավորման մեխանիզմի իրականացում,
- դրամական համակարգի կենտրոնացված կառավարում հիմնականում տնտեսական մեթոդով,
- դրամաշրջանառության կանխատեսումային պլանավորում,
- կանխիկ և անկանխիկ (փոխանցումներով) դրամաշրջանառության փոխկապակցվածություն, որտեղ գերակշռությունը տրվում է անկանխիկ դրամի շրջանառությանը,
- կենտրոնական բանկի անկախություն պետությունից, և դրա դերը կառավարման գործընթացում,

- բանկային համակարգի ակտիվներում դրամական զանգվածի ապահովվածություն,
- շուկայական համակարգի պայմաններում դրամանիշում գների մասշտաբի ու տարադրամի փոխարժեքի ինքնուրույն հաստատման կարգ և այլն:

Դրամական համակարգերը կարելի է դասակարգել նաև ըստ ազգային պատկանելության, այսինքն՝ մի երկրի դրամական համակարգը՝ որպես ազգային դրամական համակարգ, իր արժույթով, և մի քանի պետությունների դրամական համակարգը՝ որպես արտարժույթային համակարգ, իր արտարժույթով (տարադրամով), օրինակ՝ Եվրոմիության դրամական համակարգը՝ եվրոյով: Յուրաքանչյուր ազգային դրամական համակարգ ինքնատիպ է. մի երկրի դրամական համակարգը չի կարող պատճենվել մյուս երկրի դրամական համակարգի համար: Միևնույն ժամանակ՝ դրամական համակարգերի զարգացման մեջ նկատվում են որոշ ընդհանուր գծեր, ինչն իրավունք է տալիս խոսել ազգային դրամական համակարգերի զարգացման մեջ ընդհանուրի և առանձնահատուկի մասին և դասակարգել դրանք ըստ վերը նշված տեսակների:

1.4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀՀ դրամական համակարգն այսօր շուկայական տնտեսությանը հարմարեցված դրամական համակարգ է: ՀՀ պաշտոնական դրամական միավորը ազգային արժույթն է՝ դրամը: Դրամի և ոսկու կամ այլ թանկարժեք մետաղների միջև պաշտոնական փոխհարաբերությունները, ինչպես նաև կանխիկ դրամի թողարկման (էմիսիա-

յի), շրջանառության մեջ ներմուծման կամ դուրս բերման բացառիկ իրավունքը ՀՀ-ում և դրա ամբողջ տարածքում պատկանում է ՀՀ Կենտրոնական բանկին (այսուհետև՝ Հայաստանյան բանկ): Հայաստանյան բանկը (ԿԲ) հաստատում է բանկնոտների և մետաղադրամների նմուշները, որոնք ունեն օրինական վճարման ուժ: Բանկային տոմսերը (թղթադրամներ և մետաղադրամներ) համարվում են Հայաստանի բանկի պարտադիր պահուստները և ապահովվում են դրա ակտիվներով: Դրանք կիրառվում են որպես վճարման միջոց վճարման բոլոր ձևերի համար, ինչպես նաև բանկային հաշիվների, դրանցում փոխանցումների, ավանդների, ակրեդիտիվների համար:

ՀՀ վճարումներն իրականացվում են կանխիկ և անկանխիկ հաշվարկների ձևով: Հայաստանյան բանկը հաստատում է վճարումների փաստաթղթերը՝ անկանխիկ հաշվարկների կիրառման ժամանակ օգտագործելով վճարման հանձնարարագրեր, մուրհակներ, չեկեր, վարկային քարտեր, էլեկտրոնային քարտեր և այլ համակարգեր:

Էմիսիոն-դրամարկղային գործառնությունների կանոնակարգում իրականացնելու համար Հայաստանյան բանկը և գլխավոր տարածքային տեսչությունները բանկերի ու ձեռնարկությունների դրամարկղային սպասարկումն իրականացնում են հաշվարկային դրամարկղային կենտրոնների կամ շրջիկ դրամարկղերի միջոցով: Կանխիկ փողի տրման և ստացման համար, ինչպես նաև դրամական միջոցների (թղթադրամներ և մետաղադրամներ) պահուստային հիմնադրամների (պաշարներ) ստեղծման համար Հայաստանյան բանկը մշակում և ամեն տարի վերանայում է իր դրամական համակար-

գը՝ նպատակ ունենալով զարգացնել և կատարելագործել ժամանակակից դրամական համակարգի ընդհանուր դրույթները:

ՀՀ դրամական համակարգը գործում է 1993 թ., երբ ազգային էմիսիոն բանկը ստանձնեց արժույթ թողարկելու գործառույթը: Գրամի պաշտոնական կուրսը արտասահմանյան դրամական միավորների նկատմամբ որոշվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից և հրապարակվում է մամուլում: Գների ֆիքսված մասշտաբը բացակայում է: Օրինական վճարային ուժ ունեցող փողի տեսակներն են բանկնոտները և մետաղադրամները, որոնք ապահովվում են հանրապետության ԿԲ-ի բոլոր ակտիվներով: Կենտրոնական բանկն իրականացնում է ՀՀ դրամական համակարգի հետևյալ պարտավորությունները.

- ՀՀ արժույթի՝ հայկական դրամի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում (ՀՀ տարածքում օրինական վճարելամիջոց հանդիսացող թղթադրամ և մետաղադրամ թողարկելը և դրանք շրջանառությունից հետ կանչելն ու հանելը ԿԲ-ի մենաշնորհն է),
- թղթադրամի թողարկման կազմակերպում և ապահովում, մետաղադրամի անվտանգ պահպանում, ինչպես նաև օրենքով ու այլ իրավական ակտերով սահմանված կարգով դրանց ոչնչացում,
- ՀՀ օրինական վճարամիջոցի՝ թղթադրամի և մետաղադրամի անվանական արժեքի, չափի, կշռի, արտաքին տեսքի (երկու կողմերի տարբերիչ հատկանիշների) սահմանում,

- ներկայացված թղթադրամի ու մետաղադրամի՝ առանց գումարային սահմանափակումների սահմանված կարգով անվճար փոխանակում,
- հուշադրամների թողարկում. այժմ թողարկված են և շրջանառության մեջ են գտնվում թանկարժեք մետաղներից պատրաստված ավելի քան 15 անուն հուշադրամներ, որոնք նվիրված են պատմական հայտնի մարդկանց, ազգային հուշարձաններին, պատմական տարածքներին և ՀՀ-ում կայացած միջազգային միջոցառումներին:

ՀՀ դրամական համակարգը, որպես համաշխարհային դրամական համակարգի մաս, կազմակերպվում և գործում է միջազգային պահանջներին համապատասխան՝ հիմնվելով հայաստանյան առանձնահատկությունների վրա:

ԹԵՄԱ 2. ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

2.1. ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ

Դրամը, մասնակցելով հասարակական ամբողջական արդյունքի ստացմանը և դրա փոխանակմանը, կապիտալի և ապրանքային արտադրանքի շրջապտույտին, ծառայում է փոխատվական և ֆիկտիվ կապիտալի շրջանառմանը, դրա արագացմանը և կարգավորում է ապրանքաշրջանառությունը, նպաստում է սոցիալական տարբեր խմբերում եկամուտների ստացմանը: Աշխատանքի հասարակական բաժանումը և ապրանքային արտադրության զարգացումը դրամի շրջանառության օբյեկտիվ հիմքերն են, իսկ միջազգային և համաշխարհային շուկաները նոր ընթացք հաղորդեցին դրամաշրջանառության հետագա զարգացմանը:

Դրամաշրջանառությունը հասկացությունը տնտեսագիտական գրականության մեջ տարբեր կերպ է մեկնաբանվում՝ կախված վերլուծության չափանիշներից, որոնք դրված են մոտեցման հիմքում: Այսպես՝ դրամի շրջանառությունը դրամների (գումար) տեղաբաշխումն է՝ ոչ թե տեխնիկական շարժումը: Դրամական միջոցների շարժն առաջանում է դրամների շրջանառությունից (ոչ միայն կանխիկ, այլ նաև անկանխիկ) կամ վճարումների նպատակով դրամի որոշակի ժամանակահատվածում գումարների փոխանցումից, մասնավորապես՝ գնորդ-վաճառող հարաբերություններում: Դրամաշրջանառությունը դրամական միջոցների շարժի այն ձևն է, երբ դրամական նիշերը (կեպյուրա) մեկ սուբյեկտից անցնում են մեկ այլ

սուբյեկտի՝ դրանով իսկ իրականացնելով դրամի շրջանառության ֆունկցիան:

Ակնհայտ է, որ դրամաշրջանառությանը վերաբերում են՝

- միևնույն սեփականատիրոջ տարբեր հաշիվներով դրամական միջոցների տեղափոխումը,
- դրամական միջոցների տեղափոխումը՝ որպես հաշվարկային միավորներ,
- կանխիկ դրամների (գումար) տեղափոխումն առանց սեփականատիրոջ փոփոխման և այլն:

Ընդհանրապես դրամաշրջանառությունը դրսևորվում է այն դեպքում, երբ գումարները մի ձեռքից անցնում են մյուսին՝ շարունակ կազմելով շրջանառություն: Դրամը մշտապես գտնվում է շարժի մեջ երեք հիմնական սուբյեկտների միջև՝ 1) *ֆիզիկական անձանց*, 2) *տնտեսավարող սուբյեկտների*, 3) *պետական մարմինների (բանկեր)*: Հետևաբար՝ դրամը ծառայում է հասարակական ամբողջական արդյունքի ստեղծմանը, դրա փոխանակմանը և շրջանառմանը, այդ թվում՝ դրանց կապիտալի շրջապտույտին, այսինքն՝ իրականացվում է դրամաշրջանառություն: Դրամաշրջանառության առաջացման համար անհրաժեշտ է, որպեսզի երկու կողմերից մեկի մոտ առաջանա դրամի պահանջ, օրինակ՝ գործարքների իրականացման, վճարումների ժամանակ և այլն: Որքան մեծ է ապրանքների ու ծառայությունների ընդհանուր արժեքը, այնքան շատ փող է պահանջվում ունենալ շրջանառությունում, իսկ շրջանառության մեջ մտած փողերը պարտադիր պետք է շրջանառել եկամուտ ստանալու համար: Շրջանառվող դրամները կարող են հանդես գալ ավանդների,

արժեթղթերի, վարկերի, պետական պաշարների, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի ձևով և այլն:

Ըստ կառուցվածքի՝ դրամաշրջանառությունն իրականացվում է երկու ձևով՝ *ա) կանխիկ և բ) անկանխիկ*:

Կանխիկ դրամաշրջանառությունը կանխիկ դրամի շարժումն է շրջանառությունում դրամի մասնակցությամբ: Կանխիկ դրամների միջոցով վճարումներն իրականացվում են հիմնականում 1) բնակչության և կազմակերպությունների, 2) բնակչության և դրա տարբեր խմբերի, 3) բնակչության և ֆինանսավարկային (բանկ) մարմինների միջև: Այստեղ դրամը հանդես է գալիս միաժամանակ և որպես վճարամիջոցի, և որպես շրջանառության միջոցի ֆունկցիայի իրականացմամբ:

Ընդհանրապես կանխիկ դրամն օգտագործվում է ապրանքային շուկայում, ինչպես նաև ծառայությունների ու աշխատանքային ոլորտներում: Օրինակ՝ աշխատավարձի վճարման, պարգևատրումների, ապահովագրության փոխանցումների, կոմունալ վճարումների, նպաստների, թոշակների և, վերջապես, շուկայում կանխիկ վճարումների համար: Կանխիկ դրամաշրջանառությունն իրականացվում է փողի մասնակցությամբ՝ տարբեր դրամական նիշերի ու տեսակների (կեայուրա) միջնորդությամբ, նախ թղթադրամներով (բանկնոտ), ապա մետաղական դրամներով (մանարդրամ), ինչպես նաև այլ վարկային փողերի՝ վարկադրամների ձևով, ինչպիսիք են մուրիակները, չեկերը, վարկային ու էլեկտրոնային քարտերը և այլն: Կանխիկ դրամի բաց թողումը շրջանառություն (էմիսիա) իրականացվում է Կենտրոնական բանկի կողմից՝ կառավարության որոշմամբ: Դրամական

Էմիսիան կատարվում է երկու դեպքում, նախ՝ մաշված դրամները նորով փոխելու դեպքում, երկրորդ՝ պետական բյուջեի դեֆիցիտը մեղմելու կամ ծածկելու դեպքում: Հայտնի է, որ հասարակական կյանքի արտադրության և տնտեսությունների բաղադրամասերը կապող առևտուրն իրականացվում է հիմնականում կանխիկ դրամների միջոցով, այն նպաստում է ապրանքաշրջանառության արագացմանը, եկամուտների ձևավորմանը: Կանխիկ դրամաշրջանառությունն արտահայտվում է, երբ ձեռնարկություններն ու կազմակերպությունները բանկից կանխիկ դրամների դուրսգրման տեսքով՝ սեփական արտադրամիջոցներ գնելու, աշխատավարձ վճարելու, թոշակ, նպաստ և այլ վճարումներ կատարելու նպատակով, ինչպես նաև բանկի հաշվարկային, ընթացիկ կամ վարկային հաշվին կանխիկ դրամների մուտքի տեսքով, եթե տնտեսություններն իրենց կանոնադրությամբ նախատեսել են իրացումն իրականացնել կանխիկ վճարումների համակարգով: Կանխիկ դրամական միջոցները մշտապես անցնում են անկանխիկ ձևի շրջանառմանը և հակառակը:

Անկանխիկ դրամների շրջանառությունը արժեքի շարժն է առանց կանխիկ դրամի մասնակցության, որն իրականացվում է բանկային փոխանցումների միջոցով, երբ մի հաշվից մյուս հաշիվ են մուտքագրվում կամ ելքագրվում դրամական միջոցներ: Անկանխիկ դրամական միջոցներն արտահայտվում են չեկերի, մուրհակների, վարկային ու էլեկտրոնային քարտերի միջոցով: Անկանխիկ դրամաշրջանառության ժամանակ վճարումները կատարվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց ու պետական գանձարանի (պետական բյուջե) միջև՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճար-


րումների գծով և բյուջեից միջոցներ ստանալու (ֆինանսավորելու) դեպքում: Անկանխիկ դրամաշրջանառության չափերը կախված են երկրում ապրանքների շրջանառության ծավալներից, ապրանքների գների մակարդակից, պետական և տեղական ֆինանսական օղակների եկամուտների ու ծախսերի հավասարակշռությունից, ինչպես նաև ֆինանսական համակարգի միջոցով կատարվող ՀՆԱ-ի բաշխման ու վերաբաշխման չափերից:

Անկանխիկ դրամաշրջանառությամբ իրականացվում են անկանխիկ հաշվարկներ, ինչը կարևոր տնտեսական նշանակություն ունի: Երբ շրջանառությունում կրճատվում են կանխիկ փողի չափերը և մեծանում է անկանխիկ վճարումների (փոխանցումներով) համակարգը, անկանխիկ հաշվարկները նպաստում են ստվերային տնտեսությունների բացահայտմանը, չարաշահումների կրճատմանը, գների կայունացմանը, ծախսերի արհեստական ուժեղացման կանխմանը և այլն:

Ըստ տնտեսական բովանդակության՝ տարբերում են անկանխիկ հաշվարկների երկու խումբ՝ 1) *ըստ ապրանքային գործարքների* և 2) *ըստ ֆինանսական պարտավորությունների*: Ապրանքային գործարքների ժամանակ անկանխիկ վճարումներն իրականացվում են գնորդի հաշվից մատակարարի հաշվին գումարների փոխանցման եղանակով, իսկ ֆինանսական պարտավորությունները՝ կազմակերպության հաշվից պետական բյուջեի հաշվին հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների փոխանցումների տեսքով:

Կանխիկ և անկանխիկ հաշվարկները փոխկապակցված են: Այսպես՝ անկանխիկ դրամաշրջանառությունն ի հայտ է գալիս կան-

խիկ դրամը բանկային հաշիվներում մուտքագրելու ու ելքագրելու ժամանակ, իսկ կանխիկ դրամաշրջանառությունը՝ բանկային հաշիվներից դրամական միջոցները դուրս գրելիս: Բանկերը բնակչության ամենօրյա պահանջով շրջանառություն են բաց թողնում կանխիկ փող և ամեն օր այն ետ են գանձում: Սակայն կանխիկ փողն անմիջապես և ամբողջությամբ չի վերադառնում բանկ, այլ որոշ ժամանակ մնում է շրջանառությունում՝ բնակչության մոտ, ինչպես նաև կազմակերպությունների դրամարկղերում: Այսպես, օրինակ, երբ աշխատանքը վարձատրվում է 15 կամ 30 օրը մեկ անգամ, ապա ստացված գումարը որոշ ժամանակ մնում է անձանց մոտ կամ դրամարկղում՝ կանխիկ ձևով, սակայն վերարտադրության կարևոր պայման է, որ շրջանառությունում պետք է լինի այնքան դրամական զանգված (մասսա), որը կհամապատասխանի ռեալ (ճիշտ) պահանջին, մասնավորապես՝ իրացման ենթակա ապրանքային կապիտալի ծավալին: Հայտնի է, որ որքան մեծ է իրացվող ապրանքների քանակը, այնքան շատ դրամական միջոցներ են անհրաժեշտ շրջանառությունում: Պետք է նշել, որ դրամական շուկայի գործիքները բավականին վատ են ուսումնասիրված, քանի որ դրանց ծավալի վերաբերյալ վիճակագրական պաշտոնական տվյալները մասնագետների կողմից վերլուծված չեն: Որքան մեծ է անկանխիկ դրամաշրջանառության տեսակարար կշիռը, այնքան արդյունավետ է այն կազմակերպվում, ճկուն է և ենթակա է ավելի թափանցիկ դարձնել դրամական համակարգի կառուցվածքը: Գոյություն ունի միասնական վճարումների շրջանառության համակարգ, որը դրամների շարժի կազմակերպական ձևերի, դրա տարբեր տարրերի և դրամական շուկայի գործիքների փոխադարձ կապն է: Դա պարզ երևում են գծապատկեր 3.1.1-ում:



Գծ. 3.1.1. Դրամաշրջանառության կառուցվածքը:

Անկանխիկ և կանխիկ դրամաշրջանառություններն իրականացվում են միաժամանակ ապրանքների, ծառայությունների, ինչպես նաև բոլոր վճարումների համար, որի ժամանակ իրականացվում են դրամի վճարամիջոցի և շրջանառության միջոցի ֆունկցիաները, որի կարգավորմամբ և կայունության խնդիրների լուծմամբ զբաղվում են Կենտրոնական բանկը և իր ենթակայության տակ գործող առևտրային բանկերը:

**2.2. ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ,
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՐԱՄԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

Դրամաշրջանառության կարգավորման և կայուն դրամաշրջանառության կազմակերպման կարևոր խնդիրներից մեկը շրջանառության համար *անհրաժեշտ դրամի քանակի որոշումն է*: Սկզբնական շրջանում տվյալ օրենքը մեկնաբանվում էր որպես ապրանքային շրջանառության համար անհրաժեշտ դրամի քանակությունը որոշող օրենք: Եվ, քանի որ շրջանառության ընթացքում ապրանքներն իրացվում են որոշակի գներով, ապա, համաձայն տվյալ օրենքի, դրամական միջոցների քանակը որոշում են նախ՝ ապրանքների գործող գներով, իսկ այդ քանակության վրա ազդում են ոչ միայն գնային գործոնները, այլ նաև դրամական նիշերի շրջանառության արագությունը: Ընդհանրապես դրամաշրջանառության տնտեսական օրենքը սահմանում է փողի շրջանառության միջոցի և վճարամիջոցի ֆունկցիաների իրականացման համար անհրաժեշտ *դրամի քանակը*:

Դրամի քանակը որոշելիս անհրաժեշտ է ունենալ երեք հիմնական գործոն՝ ա) *շուկայում վաճառվող ապրանքների և ծառայությունների քանակը*, բ) *ապրանքների գների և ծառայությունների սակագների (փոփոխվող գներ) մակարդակը*, գ) *դրամի շրջանառության արագությունը*:

Վերը նշված երեք գործոններով որոշում են դրամի քանակը և դրա շրջապտույտի արագությունը շրջանառությունում: Հայտնի է, որ որքան զարգացած է աշխատանքի շուկան, այնքան մեծ է շուկայում

վաճառվող ապրանքների և ծառայությունների արժեքը, հետևաբար՝ մեծ է դրանց համար սահմանված գները: Այս դեպքում հաշվի է առնվում, որ դրամի քանակը կախված է նախ՝ ապրանքի գնից, և դրավրա ազդում են ոչ միայն գնային գործոնները, այլ նաև դրամաշրջանառության արագությունը:

Ընդհանրապես, որոշելով դրամի քանակը, կարգավորում են շրջանառություն մտած դրամների վճարամիջոցի և շրջանառության միջոցի ֆունկցիաները: Եվ քանի որ այդ օրենքով կարգավորում են տնտեսական հարաբերությունները, այն ստացել է «Դրամաշրջանառության տնտեսական օրենք» անվանումը.

$$P = \frac{\sum Q}{V},$$

որտեղ P -ն դրամի քանակն է, $\sum Q$ -ն՝ իրացված ապրանքների ծավալի և իրացվող ապրանքների գների արտադրյալի հանրագումարը, V -ն՝ դրամական միավորի շրջանառության արագությունը կամ շրջանառվող դրամների միջին թիվը (պլուտոնների թիվը):

Դրամական միավորի շրջանառության արագությունը հաշվարկվում է որոշակի ժամանակաշրջանի համար՝ դրամի պտույտների թվով: Հաշվի առնելով այն փաստը, որ դրամները պարտադիր պետք է շրջանառվեն եկամուտ ստանալու պայմանով, այսինքն՝ միևնույն դրամը, անցնելով ձեռքից ձեռք, մշտապես մասնակցում է աշխատանքների և ծառայությունների դիմաց վճարումներին, ինչպես նաև ապրանքների իրացմանն ու ներդրումների իրականացմանը, սպա անհրաժեշտություն է առաջանում որոշել դրամի այն օպտիմալ (ոչ ավել, ոչ պակաս) չափը, որը կբավարարի շրջանառությու-

նում պահանջվող, դրամների վճարումներին և արագ կշռջանառվի: Դրամի շրջանառման և վճարումների համար պետք է հաշվի առնվեն մի շարք պայմաններ.

1. Շրջանառություն կատարող ապրանքների և ծառայությունների ծավալը:
2. Իրացվող ապրանքների գների և ծառայությունների սակագների մակարդակը (հիարկե, որքան բարձրանում է ապրանքի գինը, այնքան շատ փող է պահանջվում դրամաշրջանառությունում):
3. Անկանխիկ (փոխանցումների) հաշվարկների բարձր մակարդակը բանկերում (ծավալը):
4. Դրամների շրջապտույտի (մուտքերի և ելքերի) արագությունը:

Այս պայմանները, որպես ներկայացված պահանջներ անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել և յուրաքանչյուր պայմանի հաշվարկից հետո ամեն օրվա դրությամբ Կենտրոնական բանկում հաշվարկվում է դրամի քանակը, առևտրային բանկերի ամենօրյա դրամարկղային հաշիվների մնացորդներով հաշվեկշռի տվյալներով: Դրամաշրջանառության տնտեսական օրենքի բանաձևը ներկայացնենք ավելի պարզեցված ձևով.

$$\begin{array}{l}
 \text{Դրամի քանակությունը, որն անհրաժեշտ է փողի շրջանառության և վճարամիջոցի ֆունկցիայի իրականացման համար (P)} \\
 = \frac{(\text{Իրացվող ապրանքների և ծառայությունների գների գումար}) + (\text{Վարկով վաճառված ապրանքների գների գումար, որոնց վճարման ժամանակը չի լրացել}) + (\text{Վճարային պարտավորություններով վճարումների գումար (պայմանագիր)}) - (\text{Փոխադարձ մարումներով վճարումների գումար (վարկի գումար})}{\text{Դրամի պտույտների միջին թիվը}}
 \end{array}$$

Ներկայացված բանաձևով Կենտրոնական բանկն ամեն օր հաշվարկում է շրջանառության մեջ անհարժեշտ դրամների քանակը, որով կարգավորում է և՛ կանխիկ, և՛ անկանխիկ դրամաշրջանառությունը: Դրամաշրջանառության կարգավորման նպատակն է թույլ չտալ շրջանառություն բաց թողած դրամների արժեզրկումը, որը կարող է առաջանալ այն ժամանակ, երբ շրջանառության մեջ ավելանում են դրամական միջոցները, մեծանում է գնողունակ բնակչության և տնտեսավարող սուբյեկտների ապրանքներ գնելու պահանջարկը: Հայտնի է, որ պահանջարկի մեծացմամբ բարձրանում են ապրանքների գները, իսկ գների աճն արժեզրկում է շրջանառության մեջ առկա դրամները: Ընդհանրապես, բարձր գները նվազեցնում են ապրանքների իրացվելիության մակարդակը, ինչի հետևանքով ընկնում է դրամի գնողունակությունը: Այդ ժամանակ շրջանառություն մտած դրամները մնում են մարդկանց մոտ կամ տնտեսավարող սուբյեկտների դրամարկղերում և չի շրջանառվում, այլ սառեցվում է, իսկ մեզ հայտնի է, որ դրամական միջոցների (կապիտալ) շրջանառությունն անհրաժեշտ և պարտադիր է, որպեսզի ստացվեն եկամուտներ: Իսկ եթե չի շրջանառվում և սառեցվում է, ապա եկամուտ չի ստացվում, և դրամները կորցնում են իրենց արժեքը՝ արժեզրկվում են:

Մետաղային դրամական համակարգի ժամանակ, երբ իրական փողը՝ ոսկին, չէր շրջանառվում, այլ կուտակվում էր և չէր մաշվում, ապա կորուստներ կամ արժեզրկում չէր լինում: Այդ ժամանակ դրամաշրջանառությունը կարգավորվում էր ապրանքների գներին համապատասխան, այսինքն՝ շրջանառության մեջ առկա դրամների

քանակը համապատասխանեցվում էր նաև արտադրության ծավալներին:

Երբ ոսկին, որպես փող, դուրս եկավ շրջանառությունից և մնաց միավոր դրամանիշում միայն որպես ստանդարտ չափ՝ գների մասշտաբ, այդ ժամանակ թղթադրամները, որպես ապրանք, արտադրվում էին և իրենց անվանական արժեքն ստանում պետության կողմից: Այդպիսի թղթադրամներն, ըստ իրենց ապահովվածության, կատարում էին փողի բոլոր ֆունկցիաները: Փողի (թղթադրամ) շրջանառության և վճարամիջոցի ֆունկցիաները կարգավորվում են Կենտրոնական բանկի կողմից՝ *«Դրամաշրջանառության տնտեսական օրենքի»* համաձայն, որի միջոցով ամեն օր որոշվում է շրջանառություն բաց թողնվող դրամի քանակը, որն արտահայտվում է դրամի մուտքերի և ելքերի հաշվեկշռման միջոցով:

Հայտնի է, որ բանկերն ամեն օր կազմում են դրամարկղի մուտքերի և ելքերի օրվա հաշվեկշիռ, որի համաձայն դուրս է բերվում մնացորդը օրվա վերջի դրությամբ: Այդ հաշվեկշիռների արդյունքներով Կենտրոնական բանկը կարգավորում է դրամաշրջանառությունը՝ դուրս բերելով ՀՀ բանկային համակարգում գործող 22 բանկերի օրվա վերջի դրամական միջոցների մնացորդային արժեքները: Եթե պարզվում է, որ մուտքերն ավելի շատ են, քան ելքերը, ապա Կենտրոնական բանկը դրանք հավասարակշռելու (կուտակված գումարները ելքագրելու) համար *նվազեցնում է վարկավորման տոկոսադրույքները*, ինչի արդյունքում մեծանում է տնտեսությունների պահանջը վարկ ստանալու համար: Այսպիսով՝ Կենտրոնական բանկը նպաստում է ազատ միջոցների տեղաբաշխմանը՝ միջոցներն ուղղելով ար-

տաղրահարաբերությունների կարգավորմանը, զարգացմանը, ինչպես նաև մեծանում է վարկառուների թիվը, արագանում են դրամական հոսքերը (ելքեր), և ելքերը հավասարվում են մուտքերին:

Երբ հավասարակշռվում են մուտքերի-ելքերի գումարները, ապա Կենտրոնական բանկը դադարեցնում է ցածր տոկոսով առևտրային բանկերի վարկավորումը:

Իսկ երբ օրվա հաշվեկշիռների արդյունքում պարզվում է, որ ելքերն են ավելի շատ, ապա Կենտրոնական բանկը *բարձրացնում է ավանդների տոկոսադրույքները*, որով շահագրգռում է ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ իրենց ազատ միջոցները ներդնելու բանկերում (եկամուտ ստանալու պայմանով): Ավանդների ներգրավմամբ մեծանում են բանկում դրամական մուտքերը և հավասարակշռվում ելքերի հետ, իսկ դրամաշրջանառությունը կարգավորվում է կամ դրամի քանակը շրջանառության մեջ ապահովվում է ապրանքներով: Եթե դրամի քանակի որոշմամբ Կենտրոնական բանկը կարգավորում է դրամաշրջանառությունը, ապա դրամաշրջանառությամբ կարգավորվում են տնտեսական և արտադրական հարաբերությունները: Կարգավորված հարաբերությունների արդյունքում միջոցներն արդյունավետ են օգտագործվում, իսկ բարձր արդյունավետությամբ ապահովվում են բարձր եկամուտներ, տնտեսությունը (էկոնոմիկա) ֆինանսապես կայուն վիճակում է գտնվում, սոցիալական ոլորտը դուրս է գալիս ճգնաժամից, բարելավվում են քաղաքական հարաբերությունները, կարգավորվում է օրենսդրական դաշտը: Դրամաշրջանառությունը Կենտրոնական բանկի միջոցով պետության վարած

ֆինանսական քաղաքականությունն է, որով կայունանում է դրամական համակարգը:

Դրամի քանակը շրջանառության մեջ արտահայտվում է դրամական զանգվածի և դրամական բազայի ցուցանիշներով.

1. *Դրամական զանգվածը* շրջանառության մեջ եղած կանխիկ դրամական միջոցներն են և բնակչության ու ձեռնարկությունների ազատ դրամական միջոցները բանկերի հաշվարկային, ընթացիկ և թղթակցային հաշիվներում: Իսկ բանկերի հաշիվներում ազատ դրամական միջոցները կոչվում են *դեպոզիտներ*, որոնք տրված են բանկերին՝ ժամանակավոր օգտագործման:
2. *Դրամական բազան* շրջանառության մեջ եղած կանխիկ դրամներն են և Կենտրոնական բանկի ու առևտրային բանկերի պարտադիր պահուստների, դրանց թղթակցային հաշիվներում դրամական միջոցների հանրագումարը:

Բանկային համակարգում *դրամական բազան* հաշվարկվում է մաս Կենտրոնական բանկի զուտ արտաքին և զուտ ներքին ակտիվների հանրագումարով: Այս երկու ցուցանիշները նույնպես սահմանվում և հաշվարկվում են բանկային օրենքներով և օրենսդրությամբ.

1. *Չուտ արտաքին ակտիվները* Կենտրոնական բանկի համախառըն արտաքին ակտիվների և արտաքին պարտավորությունների տարբերությունն է:
2. *Չուտ ներքին ակտիվները* դրամական բազայի և զուտ արտաքին ակտիվների տարբերությունն է, որը ներառում է Կենտրոնական բանկի պահանջները նախ պետական կառավարման հատվածի, ապա բանկային համակարգի նկատմամբ: Պետական

կառավարման հատվածը ներկայացնում է պետական ու համայնքային բյուջեների կենսաթոշակային հիմնադրամի, սոցիալական բյուջեի միջոցները:

3. *Համախառն արտաքին ակտիվները* բանկային ոսկու կամ միջազգային արժույթային միջոցների հանրագումարն է:
4. *Արտաքին պարտավորությունները* միջազգային արժույթային հիմնադրամից ստացված գումարների և ոչ ռեզիդենտների նրկատմամբ Կենտրոնական բանկի միջև մեկ տարի ժամկետ ունեցող պարտավորությունների հանրագումարն է:

Բանկային համակարգում բանկը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում այն միջոցներն ու առևտրային բանկերում տեղաբաշխված նոստրո հաշիվները, որոնք «Արժույթի միջազգային հիմնադրամի» (ԱՄՆ) կողմից ընդունվում են որպես հատուկ փոխառության իրավունքով արտահայտված ակտիվներ: Բանկերում ակտիվները հիմնականում ձեռք են բերվում կամ առաջանում են մոտ ապագայում վաճառելու կամ ետ գնելու նպատակով: Այդպիսի ակտիվները կոչվում են վաճառքի համար մատչելի ակտիվներ կամ ֆինանսական ակտիվներ, որոնց միջոցով բանկն ապահովում է իր շահույթը: Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող դրական իրական արժեքները, առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված միջոցները ներկայացվում են որպես ակտիվ: Իսկ պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող՝ բացասական իրական արժեքները, առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ միջոցները, ինչպես նաև տրամադրված միջոցները, ներկայացվում

են որպես պարտավորություններ: Ֆինանսական *ակտիվի* կամ *պարտավորության* սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով, իսկ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործիքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ ստանձմանը: Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ բացառությամբ այն պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, և որոնք առաջանում են այն ժամանակ, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի վերադասակարգումը չի բավարարում ապաճանաչման պահանջները: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է ըստ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի:

2.3. ԴՐԱՄԱԿԱՆ ԱԳՐԵԳԱՏՆԵՐԸ

Փողի ծագման արդյունքում կարգավորեցին ապրանքադրամային հարաբերությունները, ձևավորվեց կանխիկ և անկանխիկ դրամաշրջանառությունը՝ փողի բոլոր ֆունկցիաներով. այսպես՝ արժեչափի ֆունկցիայի միջոցով հնարավոր դարձավ որոշել ապրանքների վրա կատարված ծախսերը և ճիշտ հաշվարկել վերջնական արդյունքը՝ եկամուտը: Վաղ ժամանակներում ապրանքափոխանակումը կոչվում էր *բարտեք*, որը իտալերեն բառ է և նշանակում է *սպ-*

ըանքափոխանակություն առանց փողի: Հետագայում փողը, որպես ապրանք, փոխանակվում էր ապրանքի հետ և միայն փողի միջոցով հնարավոր դարձավ համարժեք փոխանակությամբ ստեղծել նոր արժեք՝ կատարելով ընդլայնված վերարտադրություն:

Փողը, իրականացնելով շրջանառության և վճարամիջոցի ֆունկցիաները, խիստ անհրաժեշտ և իրացվելի ակտիվ է: Փողի քանակը որոշելիս հաշվի են առնվում դրա կատարած ֆունկցիաները, մասնավորապես՝ շրջանառության միջոցի ֆունկցիան: Ընդ որում՝ փողի հետ միասին շրջանառություն են մտնում այլ ակտիվներ, որոնք կատարում են փողի ֆունկցիաները: Ելնելով շրջանառություն մտած ակտիվների իրացվելիության մակարդակից՝ այդ ակտիվները կատարում են փողի դերը և կարգավորում դրա քանակը շրջանառությունում: Այդպիսի ակտիվները կոչվում են *ազրեգատներ* և հանդես են գալիս պարամետրերի տեսքով:

Ազրեգատներն օգտագործվում են Կենտրոնական բանկի կողմից անկանխիկ դրամաշրջանառությունը կարգավորելու կամ կանխիկ ձևին փոխարիներելու ժամանակ: Ազրեգատները հանդես են գալիս որպես իրացվելի ակտիվներ և խմբավորվում են հետևյալ խմբերում՝ $M_1, M_2, M_3, M_4, \dots M_0$, ընդ որում՝

- M_1 *դրամական ազրեգատն ընդգրկում է՝*
 - ա) շրջանառության մեջ մտած կանխիկ դրամը,
 - բ) տրանսակցիոն դեպոզիտները (ավանդներ),
 - գ) ցպահանջ ավանդները,
 - դ) չեկային դեպոզիտները:
- M_2 *դրամական ազրեգատն ընդգրկում է՝*

- ա) դեպոզիտային սերտիֆիկատները,
- բ) ժամկետային համաձայնագրերը,
- գ) փոխառելիության հիմնադրամի սերտիֆիկատները:

- *M₃ դրամական ագրեգատն ընդգրկում է՝*

- ա) բանկային ակցեպտները (համաձայնագրեր),
- բ) առևտրային արժեթղթերը,
- գ) գանձապետական մուրհակները,
- դ) խնայողական դեպոզիտները (ավանդներ):

- *M₄ դրամական ագրեգատն ընդգրկում է M₃ ագրեգատի պարամետրերը՝ ավելացրած բանկերի այլ դեպոզիտացված միջոցները:*

M₁ ագրեգատի առաջին պարամետրը՝ կանխիկ դրամը, ներկայանում է շրջանառության մեջ եղած թղթադրամների, մետաղադրամների և հուշամեդալների տեսքով: Երկրորդ պարամետրը՝ տրանսակցիոն դեպոզիտները հանդես են գալիս ազատ դրամական միջոցների տեսքով, որոնք կարող են փոխանցվել այլ անձանց կողմից կատարված գործարքների վճարումների համար կամ իրականացնել չեկային և էլեկտրոնային փոխանցումներ: Երրորդ պարամետրը՝ ցպահանջ ավանդները, տոկոս չբերող ազատ դրամական միջոցներն են, որոնք ավանդադրված են բանկերում ցածր տոկոսադրույքով, և դրանց սեփականատերերը կարող են ցանկացած պահի հետ գանձել կամ իրականացնել չեկային և էլեկտրոնային փոխանցումներ: Չորրորդ պարամետրը՝ չեկային դեպոզիտները, ավանդադրված դրամական միջոցներ են, որոնց սեփականատերերը չեկային և էլեկտրոնային փոխանցումների իրավունք ունեն:

M₂ ագրեգատի առաջին պարամետրը դեպոզիտային սերտիֆիկատներն են, որոնք ժամկետային դեպոզիտներ են՝ բավական մեծ անվանական արժեքով (100 դոլար և ավելի), որոնք վաճառվում են հատերով. դրանք հիմնականում գնվում են իրավաբանական անձանց կողմից, նաև օգտագործվում են սեփականության տիտուլներ ձեռք բերելու համար: Երկրորդ պարամետրը՝ ժամկետային համաձայնագրերը, ներկայանում են ավանդի կամ դեպոզիտային միջոցների տեսքով, որոնք տոկոս բերող ազատ միջոցներ են և սեփականատերերի կողմից կարող են հետ վերցվել միայն պայմանագրի ժամկետը լրանալուց հետո: Երրորդ պարամետրը ժամկետային փոխառություններն են, որոնք նաև անվանում են մեկօրյա հետգնման պայմանով համաձայնագրեր: Դրանք ներկայանում են արժեթղթերի ձևով, որոնք բանկը կարող է հետ գնել ֆինանսավարկային ինստիտուտներից՝ նախապես համաձայնեցված գներով: Չորրորդ պարամետրը՝ փոխառելիության հիմնադրամի սերտիֆիկատները, դրամական միջոցներ են կամ անկախ ֆինանսական միջնորդներ, որոնք վաճառվում են բնակչությանը որպես հիմնադրամի մասնաբաժիններ, կամ սեփականության տիտուլներ են, որոնց վաճառքից ստացված գումարներով կարելի է ձեռք բերել կարճաժամկետ արժեթղթեր՝ հաստատագրված տոկոսներով:

M₃ ագրեգատի առաջին պարամետրը՝ բանկային ակցեպտները, այն համաձայնեցված գումարներն են, որոնք վճարվում են բանկի կողմից՝ հետագայում տոկոս ստանալու պայմանով: Երկրորդ պարամետրը՝ առևտրային արժեթղթերը, ներկայանում են առևտրային մուրհակների ձևով, որոնց միջոցով առևտրային բանկերն իրենց խնայողական դեպոզիտները ցանկացած ժամանակ կարող են փո-

խարկել կանխիկի: Երրորդ պարամետրը՝ գանձապետական մուրհակները, պարտատոմսեր են, որոնք թղթադրամների տեսքով մըտնում են շրջանառության մեջ և փոխարինում կանխիկ դրամներին, որոնց էմիսիան կառավարության որոշմամբ իրականացնում է գանձապետարանը: Չորրորդ պարամետրը խնայողական դեպոզիտները կամ ավանդադրված գումարներն են, որոնք սեփականատերերի կողմից ցանկացած ժամանակ կարող են փոխարկվել կանխիկ դրամներով: Խնայողական դեպոզիտները բարձր իրացվելի ակտիվներ են, որոնք ձևավորում են մաս M_4 ագրեգատը, իսկ վերջինս ընդգրկում է M_3 ագրեգատն ամբողջությամբ՝ ավելացրած բանկերի դեպոզիտները: Այսպիսով՝ պարզ է դառնում, որ M_1 ագրեգատն, ամբողջությամբ ընդգրկում է կանխիկ դրամական շրջանառություն կատարող դրամական միջոցները, իսկ M_2 , M_3 , M_4 և M_n -րդ ագրեգատները՝ անկանխիկ շրջանառության դրամական միջոցները:

Սովորաբար Կենտրոնական բանկն ագրեգատներն օգտագործում է դրամաշրջանառության կարգավորման ժամանակ՝ դրամի քանակը հաշվարկելու համար: Ուստի անհրաժեշտ է ագրեգատների միջև սահմանել հավասարություն, որպեսզի շրջանառության մեջ հավասարակշռվի ապրանքների և դրամական միջոցների առաջարկն ու պահանջարկը, բարձրանա ապրանքների իրացվելիության մակարդակը և դրամների գնողունակությունը, կարգավորվեն ինֆլյացիայի տեմպերը, կայնունանան գները և կարգավորվի դրամաշրջանառությունը: Քանի որ կանխիկ դրամաշրջանառության աճը նպաստում է գների բարձրացմանը և սովերային տնտեսության առաջացմանը, ապա մեծանում են չարաշահումները, քաքցվում է

վերջնական արդյունք հասույթը, նվազեցվում է փաստացի շահույթի գումարը և կրճատվում է հարկային եկամուտների ծավալը:

Ագրեգատների հավասարությունը պահպանելու նպատակով կենտրոնական բանկը պահպանում է $M_2 > M_1$ կապը, ինչպես նաև $M_2 + M_3 > M_1$ անհավասարությունը: Այս դեպքում M_2 -ը և $(M_2 + M_3)$ -ը փոխարինում են կանխիկ դրամներին և շրջանառությունից դուրս են հանում կամ կրճատում են M_1 ագրեգատը՝ կանխիկ դրամը: Երբ խախտվում է այս հարաբերակցությունը, դրամաշրջանառությունը խախտվում է՝ ազդելով տնտեսական հարաբերությունների վրա, առաջանում են դժվարություններ, մասնավորապես՝ ճգնաժամեր, ինֆլյացիա (զնաճ), դրամական միավորի արժեզրկում: Երկրում դրամական միավորը կայունացնելու նպատակով անհրաժեշտ է պահպանել կանխիկ և անկանխիկ դրամների քանակը շրջանառությունում, ուստի ամեն օր անհրաժեշտ է ճիշտ որոշել և պլանավորել դրամի քանակը՝ օգտագործելով դրամական ագրեգատները:

2.4. ԴՐԱՄԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՓՈՂԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՍԵԹՈՂՆԵՐԸ

Շուկայական հարաբերությունների պայմաններում, առանց դրամական հարաբերությունների ամրապնդման, տնտեսական կայուն աճն անհնար է: Կենտրոնական բանկի կողմից իրականացվող դրամավարկային և հակաինֆլյացիոն քաղաքականությունը *կարգավորում* և *կայունացնում* է դրամաշրջանառությունը, ինչպես նաև նվազեցնում է ինֆլյացիոն պրոցեսները: Դրամական համակարգի տարրերի փոփոխությունը կապված է դրամական բարեփոխումների (ռեֆորմներ) հետ: Դրանք են դրամական համակարգի փոփոխու-

յունները, տվյալ երկրի դրամաշրջանառության կանոնակարգումը և ամրապնդումը: Կտրուկ դրամական բարեփոխումները կապված են դրամական համակարգի կազմակերպման և դրա վրա ազդող գործոնների փոփոխման հետ. որպես կանոն՝ դրանք նպատակաուղղված են դրամական միավորի երկարաժամկետ կայունացմանը: Այդպիսի բարեփոխումները հիմնականում իրականացվում են այնպիսի միջոցառումներից հետո, որոնք պայմանավորված են պետական ֆինանսների առողջացմամբ և երկրի տնտեսությունն ամրապնդող պայմանների ստեղծմամբ: Դրամական համակարգի մասնակի փոխակերպումը նպաստում է կարճ ժամկետում դրամական համակարգում առկա բացասական երևույթների վերացմանը:

Փողի արժեզրկման հետևանքները վերացնելու նպատակով կառավարությունը կատարում է *դրամական բարեփոխումներ*, որոնք գործադրվելով փոխում են ամբողջ դրամական համակարգը կամ մասնակի փոփոխություններով շտկում առկա դրությունը, մասնավորապես՝ ապրանքադրամական, սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական հարաբերություններում:

Իսկ դրամական համակարգի լրիվ փոփոխություններ կատարվում են այն ժամանակ, երբ ստեղծվում են նոր պետություններ: Իսկ մասնակի փոփոխությունների ժամանակ դրամական համակարգը հիմնականում մնում է նույնը՝ միայն որոշակի բարեփոխումներով: Օրինակ՝ փոխվում են դրամանիշերը, միավոր դրամում գների մասշտաբը, դրամանիշերի կառուցվածքը, ըստ լիմիտի դրամների բացթողնման կարգը և այլն:

Գրամական համակարգի բարեփոխումներն իրականացվում են հետևյալ մեթոդներով՝ 1) *նուլիֆիկացիայի*, 2) *դենոմինացիայի*, 3) *դեվալվացիայի*, 4) *ռեվալվացիայի*: Մեթոդի ընտրությունը կապված է դրամի արժեզրկման մակարդակի հետ:

Նուլիֆիկացիայի մեթոդով փողը կայունացնելու ժամանակ, շրջանառության մեջ եղած ամբողջ փողի զանգվածը և փողի բազան հավասարեցվում է *գրոշի*: Այդ դեպքում նոր փողերով փոխանակում չի կատարվում, և անցնում են մետաղի՝ ոսկու դրամաշրջանառությանը: Այս մեթոդը կիրառվում է այն ժամանակ, երբ շրջանառության մեջ մտած դրամի քանակն այնքան է մեծանում, որ վնասը (դիզաժյո) կազմում է 99 %: Փողը կայունացնելու համար հին փողերն ամբողջությամբ ոչնչացնում են՝ դրանց արժեքը հասցնելով գրոշի: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո դրամական բարեփոխումներ իրականացվեցին Բելգիայում (1944 թ.), Ֆրանսիայում, Գանիայում, Հոլանդիայում, Նորվեգիայում (1945 թ.), Հունաստանում (1944-1946 թթ.), Ճապոնիայում (1946 թ.), Ավստրիայում (1947 թ.) և այլ երկրներում: Միաժամանակ որոշ երկրներում ստեղծվեցին հաշիվները, որոնք հետագայում մասամբ բացվեցին:

Նուլիֆիկացիան հիմնականում իրականացվում է հիպերինֆլյացիայից հետո ազգային արժույթի նկատմամբ վստահությունը վերականգնելու համար: Ժամանակակից պայմաններում զարգացած երկրներում, երբ խիստ հսկվում է դրամաշրջանառությունը և ինֆլյացիայի տեմպերը նուլիֆիկացիա չի կատարվում:

Փողի կայունացման կարևոր մեթոդներից է *դենոմինացիան*, որը դրամական միավորում գների մակարդակի փոփոխումն է՝ մի գնի

փոխարինումն ավելի մեծ դրամական միավորի, միաժամանակ հաշվարկելով բոլոր դրամական պարտավորությունները, մասնավորապես՝ բանկերի հաշիվները, գները, դրույքը, աշխատավարձը և այլն: Գենոմինացիա անց կացվել է 1961 թ. ԽՍՀՄ-ում՝ երբ փողը փոխվեց 1:10 հարաբերակցությամբ, 1998 թ. ՌԴ-ում՝ 1:1000 հարաբերակցությամբ, 1993 թ. Հայաստանում՝ 1:200 հարաբերակցությամբ: Գենոմինացիան ենթադրում է նաև հին թղթադրամի փոխարինում նորով՝ չսահմանափակելով արժեքը: Պաշտոնապես այն կրում է տեխնիկական բնույթ, քանի որ հեշտացնում է հաշվարկը, նվազեցնում է շրջանառության ծախսերը և չի վնասում դրամաշրջանառության տնտեսական հիմքերը: Միաժամանակ այն կարող է տնտեսության կայունացման ժամանակ՝ հիպերինֆլյացիայի վերացման վերջնական փուլում կայունացնել դրամը:

Ջարգացած երկրներում դրամական բարեփոխումները փոխարինվում են հակաինֆլյացիոն ծրագրերով, որոնք իրականացվում են Կենտրոնական բանկի կողմից անցկացրած դրամի կայունացման և դրամավարկային քաղաքականության շրջանակներում:

Դրամաշրջանառության գոյության պատմության մեջ հայտնի են դրամական բարեփոխումների հետևյալ տեսակները.

- *դրամական ապրանքի փոխարինում*՝ պղնձադրամից արծաթին, արծաթից ոսկուն և այլն,
- *արժեզրկված և ոչ լիարժեք դրամի փոխարինում* լիարժեք դրամներով, կամ արժեզրկված, չփոխարինվող դրամական միավորների փոխարինում փոխանակման ենթակա դրամներ

րով, կամ թղթադրամների արժեքի վերականգնում ուսկով և արժույթով,

- *դրամական համակարգի մասնակի կայունացում*՝ ըստ դրամական էմիսիայի, դրամական միջոցների ապահովման, գնեթրի մակարդակի, ուսկու համարժեքի կամ արտարժույթի կուրսի,
- *նոր երկրների առաջացման հետ կապված նոր դրամական համակարգերի կազմավորում* կամ մի քանի երկրների դրամական համակարգերի միացում:

Եվրոպական արժութային միության միասնական դրամական համակարգի կազմավորումը կապված էր այդ երկրներում անցկացվող դրամական բարեփոխումների հետ, քանի որ այդ ժամանակ հիմնովին փոխվել էին դրամական համակարգի բոլոր տարրերը: Ըստ շրջանառվող դրամի ձևերի՝ փողը որպես ապրանք, փողը որպես ընդհանուր համարժեքություն կամ որպես արժեքի չափ, վարկային դրամ (մուրհակ, չեկ) ու թղթադրամ, և, ըստ երկրի սոցիալտնտեսական կառուցվածքի, դրամական համակարգի մասնակի կամ լրիվ փոխակերպման, երկրի վարած քաղաքականության՝ դրամական բարեփոխումներն իրականացվում են տարբեր ձևերով: Այսպես՝ դրամական բարեփոխումները կարող են զուգակցվել բոլոր արժեզրկված թղթադրամները կամ դրանց մի մասը շրջանառությունից դուրս հանելու և դրանք նորերով փոխարինելու մեթոդով:

Փողի կայունացման հաջորդ մեթոդը կոչվում է *դեվալվացիա*: Այն լայնորեն կիրառվող մեթոդ է, որի ժամանակ պետությունը պաշտոնապես իջեցնում է ուսկու պարունակությունը միավոր դրամանի-

շում կամ, ինչպես ասում են, իջեցնում է *դրամի փոխարժեքը*՝ դրամով իսկ կրճատելով փողի քանակը շրջանառությունում: Գոյություն ունեն դեվալվացիայի *բաց* և *փակ* ձևեր. բացի ժամանակ հին արժեզրկված փողի մեծ քանակությունը փոխարինում են նոր փոքր քանակությամբ թղթադրամներով՝ նպաստելով ապրանքների գների նվազմանը: Փակ ձևի ժամանակ պետությունը դրամական միավորում գների մասշտաբը իջեցնում և հասցնում է արժեզրկման մակարդակին՝ պահպանելով ապրանքների գները, իսկ հին ու նոր փողերը փոխանակվում են 1:1-ի հարաբերությամբ: Այդ ժամանակ միավոր դրամանիշում ոսկու պարունակությունը տարբեր է սահմանվում կամ հին ու նոր փողերի փոխարժեքը տարբերվում է: Ապրանքների գները մնում են անփոփոխ, իսկ բարեփոխումների արդյունքները չեն երևում՝ ի տարբերություն բաց ձևի: *Դեվալվացիայի* օրենքով փողը կայունացվել է միայն այն շրջանում, երբ վերականգնվել է մետաղական դրամաշրջանառությունը: Դեվալվացիայի ժամանակ բանկային տոմսերն ազատ փոխանակվում են ոսկով, իսկ թղթադրամները՝ ոչ, քանի որ դրանք ունեն ինֆլյացիա առաջացնելու հատկություն: Առաջին համաշխարհային պատերազմից հետո գրեթե բոլոր երկրներում փողը կայունացվել է դեվալվացիայի օրենքով: Օրինակ՝ 1924 թ. Գերմանիայում փողը խիստ արժեզրկվել էր, և դեվալվացիայի օրենքով 1 տրիլյոն հին դրամները (գերմանական մարկ) փոխանակվեցին մեկ տրիլյոն նոր դրամներով (գերմանական մարկ), և քանի որ այդ քանակությունը դրամական համակարգի մի մաս էր կազմում, ապա այդ երևույթը նույնփիկացիայի ձև ընդունեց: Սակայն դրամների քանակը մնացել էր նույնը, փոխվել էր միավոր դրամանի-

շում ոսկու պարունակությունը, իսկ ապրանքների գները մնացել էին նույնը: 1925 թ. Անգլիայում դրամի արժեզրկման երևույթը կարգավորվել է դրամական համակարգի բարեփոխումներով: Իսկ Ռուսաստանում դեֆլավացիան կիրառվել է 1895-1897 թթ., երբ բարեփոխումների ժամանակ կապիտալի՝ ոսկու պարունակությունը մնաց նույնը, իսկ նվազագույն չափը աճեց 50 տոկոսով: 1961 թ. գները փոխվեցին 10 անգամ, իսկ ոսկու պարունակությունը միավոր դրամանիշում՝ 4,6 անգամ: 1949 թ. ԱՄՆ դոլարի նկատմամբ միաժամանակ իրականացրեցին 37 տեսակի դեֆլավացիա՝ նվազագույն չափը աճեցնելով 12-30,5 տոկոսով: Այս երևույթը կտրուկ բարձրացրեց դոլարի գնողունակությունը Եվրոպայում՝ մեծացնելով եվրոպական երկրների պարտքը ԱՄՆ-ին:

Երկրորդ զանգվածային դեֆլավացիան անցկացվել է 1967 թ. Մեծ Բրիտանիայում և 25 այլ երկրներում, երբ արժույթի փոխարժեքը նվազել էր 5-25 տոկոսով:

Դեֆլավացիան մոնոմետալիզմի ժամանակ երկրի ներքին դրամաշրջանառությունը կայունացնող միջոց էր, երբ պետություններն իջեցնում էին դրամական միավորի ստանդարտը (գների մասշտաբ), ոսկու կամ արծաթի պարունակությունը, ապա վերականգնում երկրի արժույթը: Եվ, վերջապես, դեֆլավացիան իրականացվում էր այն բանից հետո, երբ դրամի արժեզրկումը վերջնականապես կարգավորվում էր և որոշվում դրամի կայուն փոխարժեքը:

Ընդհանրապես, դեֆլավացիան կիրառվում է ոսկու փոխարժեքի փոփոխման ավարտից հետո և ուղղվում արտաքին շուկայում երկրի մրցակցային դիրքերի ամրապնդմանը, վճարային հաշվեկշի

վիճակի բարելավմանը, արտասահմանյան ներդրումների ծավալի մեծացմանը:

Բրետոն-Վուդյան համակարգի պայմաններում 10 %-ից ավելի դեվալվացիա անցկացնելու համար պահանջվում է միջազգային արժույթային հիմնադրամի համաձայնությունը, իսկ Ջամայկյան արժույթային համակարգի պայմաններում՝ լողացող (փոփոխվող) արժույթային կուրսի ներդրումով դեվալվացիան արժույթային շուկայում իրականացվում է ամեն տարի:

Դեվալվացիան չի վերացնում դրամաշրջանառության խնդիրները և ժամանակակից պայմաններում չի վերականգնում ազգային արժույթի կայունությունը, ավելին՝ այն նվազեցնում է դրամի գնողունակությունը, մասնավորապես՝ ներմուծվող ապրանքների թանկ գների արդյունքում, և խթանում է երկրում ինֆլյացիոն պոտենցիալը:

Դրամական բարեփոխումների հաջորդ մեթոդը՝ *ռեվալվացիան* (վերականգնում) է, երբ պետությունը պաշտոնապես բարձրացնում է դրամական միավորի գինը կամ դրամական միավորների կամ թղթադրամների փոխարժեքը:

Այդպիսի բարձրացում արձանագրվել է 1821 և 1924 թվականներին Մեծ Բրիտանիայում և 1979 թ. ԱՄՆ-ում անցկացված դրամական բարեփոխումների ընթացքում:

20-րդ դարի 70-ական թվականների կեսերին, երբ ոսկու պարունակությունը դրամանիշերում վերացվեց, ռեվալվացիան արտահայտվեց միայն արժույթի շուկայական գնի բարձրացմամբ: Օրինակ՝ Գ.ՖՀ-ում Բրետոն-Վուդյան արժույթային համակարգի շրջանակներում անցկացվել է երեք ռեվալվացիա (1961, 1969, 1971 թթ.),

այնուհետև՝ մի քանի անգամ եվրոպական արժութային համակարգի շրջանակներում՝ պահպանելով ամրագրված արժութային կուրսեր:

Ռեվալվացիան կասեցնում է երկրում ինֆլյացիոն գործընթացները, քանի որ ներմուծվող ապրանքներն ավելի էժան են դառնում, ինչը ձեռնառու չէ արտահանողների համար, քանի որ արտասահմանյան արժույթն այդ ընթացքում էժանանում է սեփական արժույթի համեմատ և նրանք կորուստներ են ունենում վաղ կնքված պայմանագրերի պատճառով:

Վաղ ժամանակաշրջանում դրամական համակարգում օգտագործվել է նաև փողի կայունացման *դեֆլյացիոն* մեթոդը: Ընդհանրապես, դեֆլյացիոն քաղաքականություն նշանակում է թերլցում, երբ փողը լրիվ արժեզրկված չի լինում և կառավարությունը, որոշակի գումար հանելով շրջանառությունից կրճատում է շրջանառությունում դրամական զանգվածը՝ նպատակ ունենալով կարգավորել ապրանքների գները: Ապրանքների գների կարգավորմամբ բարձրանում է իրացման մակարդակը, արտադրահարաբերությունները զարգանում են, արտադրությունը աճում է, իսկ ապրանքների առաջարկը համապատասխանում է գնողունակ պահանջարկին: Հետևաբար՝ դրամական բարեփոխումները հաջող իրականացնելու համար անհրաժեշտ է՝

- 1) արտադրության աճ,
- 2) բյուջեի դեֆիցիտի կրճատում,
- 3) պետության վարած ճիշտ քաղաքականություն,
- 4) գործազրկության կրճատում,
- 5) արտաքին տնտեսական կապերի ընդլայնում,

6) ինֆլյացիայի կարգավորում,

7) փողի կայունացում,

8) դրամաշրջանառության կարգավորում,

9) միջազգային արժուքային հիմնադրամում կայունացման մի շարք ծրագրերի իրականացում:

Դրամական բարեփոխումների անցկացման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք պատճառներով, մասնավորապես՝ *տնտեսական* և *քաղաքական*.

- *տնտեսական*՝ դրամական և ֆինանսական համակարգերի փլուզում, ազգային արժույթի նկատմամբ վստահության անկում, ինչպես նաև ազգային արժույթի փոխարժեքի բարձրացում արտարժույթի նկատմամբ, տնտեսական ճգնաժամեր, Կենտրոնական բանկի վարած դրամավարկային քաղաքականության ուղղվածություն,
- *քաղաքական*՝ երկրի քաղաքական կարգի փոփոխում կամ նոր պետության ստեղծում:


Դրամական բարեփոխումների նախադրյալներ են նաև՝

- բյուջեի եկամուտների աճի և բյուջեի դեֆիցիտի ծածկման համար էմիսիայի մերժումը,
- բանկերի նկատմամբ վստահության կորուստը կամ դրամական միջոցների պահպանման համար խնայողությունների ստեղծումը, կամ վարկերի ստացման ընդլայնումը,
- բավարար ոսկու՝ արժուքային կապիտալի առկայությունը, ըստ որի որոշվում է արժույթի կուրսի կայունությունն ու ա-

պահովվածությունը կամ ապրանքների ու դրամական միջոցների քանակի հավասարակշռությունը:

Դրամական բարեփոխումների անհրաժեշտության ուղղությունները և նախադրյալների կարգը կարող ենք ներկայացնել գծապատկեր 2.4.1-ի տեսքով:

ՀՀ անկախացումից հետո տնտեսության պատմության մեջ եղել են մի քանի դրամական բարեփոխումներ, որոնց միջոցով կարգավորվել և կայունացվել է դրամական համակարգը: Այդ բարեփոխումներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները՝ ըստ տնտեսական և քաղաքական նախադրյալների, որոնք ազդեցություն են գործել երկրի հետագա զարգացման վրա:



Գծ. 2.4.1. Դրամական բարեփոխումների հաջող անցկացման նախադրյալները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան Բ. Բանկային գործ. - Եր., 2004:
2. Բագրատյան Ա. Բանկային գործ. - Եր., 2003:
3. Ղալումյան Լ.Տ. Բանկային և վարկային համակարգը շուկայական հարաբերություններում. - Եր., 1996:
4. Բաղանյան Լ. Բանկային գործի հիմունքներ. - Եր., 2003:
5. Բաղանյան Լ. Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկեր. - Եր.: ՀՊՏՀ, 2007:
6. ՀՀ Կենտրոնական բանկ. «Հայաստանի բանկային համակարգը, զարգացումը, կարգավորումը, վերահսկումը. - Եր., 2000:
7. Дробозина Л.А. Финансы, денежное обращение и кредит. – М., 2000.
8. Балабанова И.Т. Деньги и финансы. – Минск, С-Пб., 2000.
9. Лаврушина О.И. Деньги, кредит, банки. – М., 2005.

Ստորագրված է տպագրության 28.12.2010թ..
Թղթի չափսը 60x84 ¹/₁₆, 3,5 տպ. մամուլ, 2,8 հրատ. մամուլ
Պատվեր 10: Տպաքանակ 200:

ՀՊԱՀ-ի տպարան, Տերյան 74

